

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2010 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Նիկոլայ Գրիգորյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի անդամ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝

ա) սակագնային բաժին,

բ) ֆինանսական վերլուծության բաժին,

- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,

- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային

ծրագրերի վարչություն՝

ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,

- սպառողների հետ կապերի բաժին,

- տնտեսական բաժին,

- անձնակազմի կառավարման բաժին,

- հաշվապահական հաշվառման բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովն իր գործառույթների առաջնահերթություններից է համարում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից: Այս համատեքստում 2010 թվականին շարունակվել են **էներգետիկայի բնագավառի** կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացում պարբերաբար առաջացող խնդրահարույց հարցերը, 2010 թվականին հանձնաժողովը փոփոխություններ ու լրացումներ է կատարել էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում, որով, ի թիվս այլ փոփոխությունների, կրճատվել ու հստակեցվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Հանձնաժողովը գործունե մասնակցություն է ունեցել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների

նախագծերի մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով վերջիններիս կիրարկման արդյունավետությունը խթանող առաջարկություններ: Հանձնաժողովի գործուն մասնակցությամբ են ընթացել նաև «Մեղրի» հիդրոէլեկտրակայանի կառուցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման աշխատանքները:

Սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով 2010 թվականին էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ամիս սպառած էլեկտրական էներգիայի կամ բնական գազի դիմաց վճարում կատարող բնակչի անդորրագրում հստակ կարտացույց են բաժանորդի անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքները, առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքների գրանցման օրը, հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի կամ բնական գազի քանակը և արժեքը, պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին ու վճարման ամսաթիվը: Կազմակերպությունների դեպքում՝ նրանց գրավոր պահանջի հիման վրա, մատակարարները պարտավոր կլինեն յուրաքանչյուր ամիս ծանուցել ինչպես բնակչության վճարման փաստաթղթերում, այնպես էլ տվյալ սպառողի կողմից հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի կամ բնական գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործվող այլ ցուցանիշների մասին: Ընդ որում, վերջիններս մատակարարից կարող են պահանջել ծանուցումը ներկայացնելու գրավոր կամ էլեկտրոնային փոստով: Ծանուցումը փոստով առաքելու պահանջի դեպքում մատուցված փոստային ծառայության համար կվճարի բաժանորդը, իսկ էլեկտրոնային փոստով ծանուցումը կիրականացվի անվճար:

Կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը հանձնաժողովի հետ համաձայնեցման գործընթացը պարզեցնելու և հստակեցնելու նպատակով լրամշակվել է էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը:

Հանձնաժողովում իրավական փորձաքննություն են անցել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 125 պայմանագրեր:

Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ աշխատանքներ են տարվել նաև **Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում**: Հաշվի առնելով այս բնագավառի զարգացման միջազգային միտումները և հանձնաժողովի հաստատած էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը, 2010 թվականին աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում արդար ու բաց մրցակցության ապահովման և էլեկտրոնային

հաղորդակցության ծառայությունների հասանելիության բարձրացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների շարժական կապի ցանցերի և ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի միջև միջօպերատորական փոխկապակցման ծառայությունները, ինչպես նաև տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների միջև տրաֆիկի փոխանակումը կանոնակարգող իրավական ակտերի ընդունումը.
- «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցից դեպի ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանց կատարվող զանգերի առավելագույն սակագների սահմանումը.
- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դասակարգմանը և շուկաների սահմանմանը միտված աշխատանքների իրականացումը:

2010 թվականին քայլեր են ձեռնարկվել նաև միջազգային IP տարանցման ծառայությունների շուկայում մրցակցության զարգացումը խթանելու և այլընտրանքային ուղիներ ապահովելու ուղղությամբ՝ այդ ծառայությունների մատուցման համար ստեղծելով ավելի նպաստավոր իրավական դաշտ:

Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև տեղական տրաֆիկի փոխանակման որակական չափանիշներ սահմանելու և այդ ոլորտում արդար և արդյունավետ մրցակցություն ապահովելու նպատակով հանձնաժողովի համապատասխան որոշմամբ կանոնակարգվել է հանրային ինտերնետ օպերատորների ցանցերի միջև տրաֆիկի փոխանակումը: Մասնավորապես, դասակարգվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցելու նպատակով շահագործվող և ինքնավար համակարգի պաշտոնապես գրանցված համար (ASN) ունեցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու ցանցերի միջև համաչափության սկզբունքով տրաֆիկի փոխանակությունը որպես պիրիինգային միացում, սահմանվել են այդպիսի միացում ապահովելու ժամկետները և տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների պարտավորությունները: Հստակորեն սահմանվել են նաև պիրիինգային միացման կետի և անհրաժեշտ կապուղիների կազմակերպման ծախսերը կրողները:

Հանձնաժողովը, Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում, ներկայացրել է առաջարկություններ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորման իրավական դաշտը Եվրոպական դիրեկտիվներին համապատասխանեցնելու վերաբերյալ, իսկ Թայքս ծրագրի շրջանակում փոստային կապի բնագավառում ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու նպատակով կազմակերպվել է սեմինար:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

2010 թվականի հունվար ամսին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները հայտեր են ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու գազամատակարարման համակարգի սակագները: Հաշվի առնելով 2010 թվականի ապրիլի 1-ից հանրապետություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի բարձրացումը, բնական գազի սպառման ծավալների նվազումը, 2009 թվականին գազամատակարարման համակարգում իրականացված ներդրումները և գազամատակարարման համակարգի ընդլայնման հետ կապված շահագործման և պահպանման ծախսերի փոփոխությունները, հանձնաժողովը վերանայել և սահմանել է սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, փոխադրման և բաշխման նոր սակագներ:

Հիմք ընդունելով «Հրագրանի էներգետիկ կազմակերպություն (ՀրագՋԷԿ)» բաց բաժնետիրական և «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերություններին վաճառվող բնական գազի նոր սակագինը, էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման 2010 թվականի կանխատեսումները, նույն տարվա պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, 2009 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2010 թվականի ապրիլի

1-ից վերանայել է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և 2010 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտալու նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի բարձրացումից հնարավոր եղավ խուսափել նաև «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի շոգեգազային համակցված ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի աշխատանքի շնորհիվ, որն իրականացվում է Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև կնքված գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի շրջանակում: Էներգաբլոկն ունի արդյունավետության բավական բարձր ցուցանիշներ, և նշված պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից հետո արտադրած էլեկտրաէներգիայի շուրջ 40%-ը զգալիորեն ցածր սակագնով ուղղվում է ներքին շուկայի սպառողների պահանջարկի բավարարմանը:

2010 թվականի ապրիլին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հանձնաժողով ներկայացրած հայտի հիման վրա սահմանվել են համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանից առաքվող էլեկտրական և ջերմային էներգիայի սակագները: Վերանայվել են նաև «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին առաքվող ջերմային էներգիայի սակագները:

2010 թվականի հունիսին համապատասխան հայտերի հիման վրա վերանայվել են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «ԵՐՖՐԵԶ» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայաններից, իսկ 2010 թվականի օգոստոսին սահմանվել են «Լուս Աստղ Շուգր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում շաքարի գործարանում կառուցված ջերմաէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 19 նորակառույց և վերանայվել 9 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ինչպես հայտնի է, ՀՀ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները՝ համաձայն ընդունված մեթոդիկայի, ելնելով սղաճի և փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի վերանայվում են: 2010 թվականի նոյեմբերին վերանայվել են փոքր հիդրոէլեկտրակայաններից, հողմային էլեկտրակայաններից և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի բազիսային սակագները: Ընդհանուր առմամբ վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 62 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

2010 թվականի ավարտին ուսումնասիրվել և հաստատվել են երկդրույթ սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2011 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2011 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույթաչափերը:

2009 թվականի օգոստոսի 1-ից միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ», «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումին հավատարմագրային կառավարման հանձնված «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ները 2010 թվականի հունվարին հայտեր են ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: «Նոր Ակունք» ընկերության սակագինը 2004 թվականից ի վեր, իսկ «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ընկերություններինը՝ 2005 թվականից ի վեր չէին վերանայվել, մինչդեռ այդ տարիների ընթացքում տեղի էր ունեցել էլեկտրական էներգիայի սակագնի 20% աճ, ջրի սպառման նվազում՝ պայմանավորված ընկերություններում ջրաչափերի տեղադրմամբ և հաշվառման համակարգի կատարելագործմամբ, ինչպես նաև շահագործման և պահպանման

ծախսերի փոփոխություններ: Հանձնաժողովը, հայտերի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, վերանայել է նշված ընկերությունների կողմից 2010 թվականի ապրիլի 1-ից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

2010 թվականի փետրվարին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Մանրածախ ջրամատակարարման ծավալների հիմնավորման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքում 2009 թվականի մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալը հաշվարկներում ավելացվել է շուրջ 7.4 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 195 դրամ/լիտր (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը): Սակայն, հաշվի առնելով գործող սակագներն անփոփոխ թողնելու նպատակով դրանք սուբսիդավորելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի առաջարկությունը, 2010 թվականի հուլիսի 8-ից վերահաստատվել են «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագները՝ 181 դրամ/լիտր: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագներ:

2010 թվականին, հաշվի առնելով անհատ ձեռնարկատիրոջ ներկայացրած հայտը, սահմանվել են ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի «Արևալանջ» թաղամասում խմելու և ոռոգման մեծածախ ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագները:

Լրամշակվել են նաև էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունը հանձնաժողով ներկայացնելու կարգը և էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի միջին սակագնի և սակագնային մարժայի հաշվարկի ձևը:

Հանրապետությունում ներկայումս գործող հիդրոէլեկտրակայաններից 29-ի սակագները հաշվարկվում են՝ ելնելով համապատասխան մեթոդիկայով ամրագրված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից: Հաշվի առնելով հիշյալ հիդրոէլեկտրակայանների սեփականատերերի կողմից վերջերս բարձրացված՝ սակագնի տարր կազմող որոշ ծախսային հոդվածների անբավարար լինելու վերաբերյալ հարցը, հանձնաժողովն ուսումնասիրել և համապատասխան փոփոխություններ է կատարել սակագների հաշվարկման մեթոդիկայում, հնարավորություն ընձեռելով նրանց ցանկության դեպքում սակագների հաշվարկային մեթոդից անցնելու հաստատուն սակագների մեթոդին:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով փոխկապակցման ծառայությունների վճարների կարգավորման ոլորտում հանձնաժողովին վերապահված իրավասությունների շրջանակում, «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների շարժական կապի ցանցերի և ոչ աշխարհագրական սկզբունքով համարներ օգտագործող օպերատորների ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները կանոնակարգելու նպատակով, մշակվել է ժամանակացույց, որի համաձայն հաստատվել է վերոնշյալ ընկերությունների շարժական կապի ցանցերում սկզբնավորված զանգերի՝ ամրակցված կապի ցանցերում վերջնավորման, ինչպես նաև ամրակցված կապի ցանցերում սկզբնավորված զանգերի՝ շարժական կապի ցանցերում վերջնավորման ծառայությունների վճարները: Ընդ որում, 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ կիսամյակային պարբերականությամբ, նշված վճարներն ունեցել են նվազման միտում. մասնավորապես, շարժական կապի ցանցերում սկզբնավորված զանգերի վերջնավորման ծառայության վճարը ամրակցված կապի ցանցերում սահմանվել են 9,72 դրամ/րոպե, իսկ այնուհետև նվազել մինչև 9,00 դրամ/րոպե: Ամրակցված կապի ցանցերում սկզբնավորված զանգերի վերջնավորման ծառայության վճարը շարժական կապի ցանցերում պիկ և ոչ պիկ ժամերի համար սահմանվել է համապատասխանաբար 19,83 և 14,74 դրամ/րոպե, իսկ այնուհետև նվազել մինչև միասնական 11,40 դրամ/րոպե ծառայության վճարի: Նշված որոշման կիրարկման հետևանքով Էականորեն նվազել են նաև վերջնական օգտագործողների համար սահմանված սակագները, ինչը բերել է վերջնական օգտագործողների թվի ավելացման:

2010 թվականին հանձնաժողովը հաստատել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ամրակցված ցանցում՝ այլ օպերատորների ամրակցված ցանցերում սկզբնավորված զանգերի ավարտման ծառայության վճարները, որոնք կազմում են համապատասխանաբար 2,1

դրամ (փոխկապակցման կետի տարածքում՝ Երևան) և 8,33 դրամ (փոխկապակցման կետի տարածքից դուրս՝ մարզեր):

Եվրոպական միության շրջանակում ընդունված մոտեցումներից ելնելով, հաստատվել է նաև այլ օպերատորների ամրակցված ցանցերում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ամրակցված ցանցում սկզբնավորված զանգերի ավարտման ծառայության վճարը՝ 2,1 դրամ (առանց ԱԱՀ-ի): Այս վճարը սահմանելիս հաշվի են առնվել զանգերի ավարտման վճարների համաչափության սկզբունքը և առկա իրավիճակում հնարավորինս ողջամիտ (ցածր) փոխկապակցման վճար սահմանելու անհրաժեշտությունը, որն իր հերթին նպաստել է բաժանորդների համար համեմատաբար ցածր սակագների սահմանմանը՝ օպերատորների կողմից ձայնային ծառայություններ մատուցելիս:


Հանձնաժողովի հետևողական աշխատանքի արդյունքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն Երևան քաղաքի ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը 2009 թվականին եղած 92%-ից 2010 թվականին հասցրել է 98%-ի, մարզերինը՝ նախորդ տարվա 53%-ից հասցրել է մոտ 62 %-ի:

Հետևելով բջջային կապի ցանցերում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման համաշխարհային զարգացումներին, հանձնաժողովը 2010 թվականին բավարարեց «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հայտը և տրամադրեց Հայաստանի Հանրապետությունում LTE (երկարաժամկետ էվոլյուցիա) տեխնոլոգիայի միջոցով շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը գործողության ժամկետով: Դրանով Հայաստանում փաստացի հիմք դրվեց 4G-շարժական (բջջային) կապի չորրորդ սերունդի ցանցերի ներդրմանը, որը բնութագրվում է տվյալների հաղորդման բարձր արագությամբ և ձայնային կապի լավագույն որակով: Չորրորդ սերունդի տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս տվյալների հաղորդումն իրականացնել 100 Մբիթ/վ-ից բարձր արագությամբ:

LTE տեխնոլոգիայի կիրառումը բերելու է բջջային կապի որակապես նոր ծառայությունների մատուցման՝ բաժանորդները կարող են ռեալ ժամանակի ռեժիմում ստանալ բարձրորակ տեսագրություններ, աշխատել ինտերակտիվ ծառայությունների հետ և այլն:

«ԱրմենՏել» փակ բաժնետիրական և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության մեկ Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն սակագնի սահմանումից հետո, որն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունվարի 1-ից, նշված սակագնի մեծությունը մեկ Մբիթ/վ-ի համար, կախված ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի հարաբերակցությունից, չի գերազանցել 174 000


դրամը, իսկ 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ դրա միջին արժեքը մեծաձախ օպերատորների մոտ կազմել է 67000 դրամ:



Գերիշխող օպերատորների կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության առավելագույն սակագնի սահմանումը հանրապետությունում բերել է վերջնական օգտագործողներին մատուցվող մանրաձախ ինտերնետի գների նվազման:

2010 թվականին ինտերնետ հասանելիության նոր, լայնաշերտ անլար WiMAX և UMTS/3G տեխնոլոգիաների վրա հիմնված ցանցերի շահագործման արդյունքում զարգացում է ապահովել նաև ինտերնետ հասանելիության ծառայությունների ոլորտը: Մասնավորապես, բավական բարձր մրցակցության պայմաններում ընդլայնվել է օգտվողներին մատուցվող ծառայությունների տեսականին և բարելավվել են դրանց որակական բնութագրերը, իսկ սակագները զգալիորեն նվազել են:

2010 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ հանրապետություն մուտք գործող ինտերնետի հոսքը կազմել է 11257 Մբիթ/վ, որը 2009 թվականի համեմատությամբ աճել է շուրջ 3,5 անգամ: Ստորև գրաֆիկով ներկայացվում է գործող մեծաձախ օպերատորների կողմից ձեռք բերված միջազգային IP տարանցման հոսքերի թողունակության դինամիկան ըստ տարիների.



2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ինտերնետ ծառայություններից օգտվողների թիվը (այդ թվում՝ GPRS և 3G տեխնոլոգիաներով, ինչպես նաև բջջային կապի ցանցերով) 2009 թվականի համեմատությամբ աճել է շուրջ 35 %-ով:

2010 թվականին էականորեն մեծացել է միջազգային ինտերնետային տրաֆիկը, ինչը նպաստել է նաև մեծածախ ինտերնետ մատակարարների միջև մրցակցության ձևավորմանը: Այսպես, GPRS տեխնոլոգիայով ինտերնետ ծառայություններից օգտվողների թիվը 2009 թվականի վերջի համեմատությամբ 2010 թվականի վերջին աճել է շուրջ 56%-ով, իսկ լայնաշերտ ինտերնետ հասանելիությունից օգտվողների թիվը՝ շուրջ 3 անգամ: Նույն ժամանակահատվածում էականորեն՝ շուրջ 4 անգամ, նվազել է հեռախոսացանցի միջոցով (dial-up) ինտերնետ ծառայություններից օգտվողների թիվը: Հարկ է նշել, որ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման միջին սակագինը 2009 թվականի վերջի դրությամբ մեկ Մբիթ/վ-ի համար սահմանված 15 հազար դրամից 2010 թվականի վերջին նվազել է շուրջ 47%-ով և կազմել 8 հազար դրամ:

2010 թվականի հունվարի 1-ից կիրառվում է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները սահմանող ժամանակացույցը, որով փոխկապակցման վճարները կիսամյակային սկզբունքով նվազել են 10-60%-ի չափով: Նույն այդ օրվանից կիրառվում է նաև վերոհիշյալ ընկերությունների բջջային ցանցերում կարճ հաղորդագրության (SMS) և մուլտիմեդիա հաղորդագրության (MMS) վերջնավորման փոխկապակցման ծառայությունների վճարների ժամանակացույցը, համաձայն որի բջջային ցանցում կարճ հաղորդագրության (SMS) և մուլտիմեդիա հաղորդագրության (MMS) վերջնավորման սակագինը կիրառվել է 9 դրամ/SMS/MMS առաջին կիսամյակի համար և 7 դրամ/SMS/MMS՝ երկրորդ կիսամյակի համար: Նախատեսվում է մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը նշված փոխկապակցման ծառայության վճարներն իջեցնել մինչև 3 դրամ/SMS/MMS:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը: Իրականացված աշխատանքների արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

2010 թվականին կրճատվել են նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները: Կարգավորմանը վերաբերող հաշվետվություններ ստանալու նպատակով 2010 թվականին հանձնաժողովը «Հայփոստ» ՓԲԸ-ի համար մշակել է ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների համակարգ և ընկերության ներկայացուցիչների հետ քննարկել այն ներդնելու հարցը:

Սահմանված կարգին և ձևերին համապատասխան, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություններ մատուցող թվով 25 ընկերություններ հանձնաժողով են ներկայացրել եռամսյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն:

Ջրային համակարգի և էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊԸ-ն ևս հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովն իր ինտերնետային կայքում

(www.psrc.am) հրապարակել է կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորումը կարգավորման այն հիմնական գործառույթն է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կարգով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2010 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 22, էլեկտրական էներգիայի արտադրության՝ 20, ջերմաէլեկտրակայանի կառուցման՝ 1, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության՝ 1, ջերմաէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության 1 լիցենզիա: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի՝ 9, ձայնային ծառայությունների մատուցման՝ 10, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 7 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 50, սիրողական ռադիոյի՝ 61, համարների զբաղեցման՝ 31 և ջրային համակարգում՝ ջրային համակարգի օգտագործման 2 թույլտվություն:

Բացի վերը նշվածից, էներգետիկայի բնագավառում ստացվել և բավարարվել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 27 հայտ, ինչպես նաև լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը վարձակալության տրամադրելու, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն կամ բաժնետոմսի (բաժնեմաս) վաճառելուն համաձայնություն տալու 45 դիմում: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել և բավարարվել են պարզ ընթացակարգով լիցենզավորված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու 117 հայտ, իսկ ջրային համակարգում՝ ջրային համակարգի օգտագործման

թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման 1 հայտ և ջրային համակարգի օգտագործման թույլտվության մեջ փոփոխություն կատարելու 1 դիմում:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գտնվող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2010 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է շուրջ 5,8 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 4,3 մլրդ դրամը, ռադիոհաճախականությունների օգտագործման գծով մուտքերն են:

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

2010 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում իրականացվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի մոնիթորինգ, որի արդյունքում ընկերությանը հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել միացման ընթացակարգով նախատեսված ժամկետների խախտումները բացառելու նպատակով:

Իրականացվել է նաև «ՀայԲուսգազարդ» ՓԲԸ-ի գազամատակարարման ընդհատումների հաճախության և տևողության չափանիշների վերլուծություն, որի արդյունքներով ընկերությանը հանձնարարվել է հնարավորինս բարձրացնել ընդհատումների պլանավորման արդյունավետությունը: Բացի այդ, լրամշակվել են սպառողների սպասարկման որակի գնահատման նպատակով «ՀայԲուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում ևս իրականացվել է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ, որի արդյունքում ընկերությանը հանձնարարվել է գրանցամատյանների լրացման պատասխանատու անձանց համար կազմակերպել լրացուցիչ հրահանգավորում՝ գրանցամատյանների վարման և դրանց լրացման պահանջների վերաբերյալ, ինչպես նաև շտկել ջրամատակարարման գրաֆիկներում տեղ գտած առանձին անհամապատասխանությունները:

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը հանձնաժողովի հետ, որը հնարավորություն է տալիս վերահսկել ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը: Հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և, հետևաբար, անմիջական ազդեցություն ունենում սակագների վրա, հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով իրականացնում է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն:

2010 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել ընկերությունների 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակվել են համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Շարունակվել են նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկման աշխատանքները: Քննարկվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից համաձայնեցման ներկայացված 2011 թվականի ներդրումային ծրագիրը և ընդունվել համապատասխան որոշում՝ սահմանելով սպասարկման որակի ցուցանիշների նոր ծրագրային մեծությունները: Ամփոփվել են նաև ընկերության 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Սակագների վրա ներդրումների ազդեցությունը հավասարակշռելու նպատակով հանձնաժողովը զգալիորեն նվազեցրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2010 թվականի համար համաձայնեցված ներդրումային ծրագրի ծավալը: Աշխատանքներ են տարվել սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու համար: Այս ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնել ներդրումները: Ներկայումս սպասարկման որակի

ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են Երևան քաղաքի և հանրապետության յուրաքանչյուր մարզի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջնահերթ նպատակաուղղել առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Հարկ է նշել նաև, որ սկսած 2005 թվականից, սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի ինտերնետային կայքում (www.psrc.am): Այստեղ կարելի է ծանոթանալ նաև ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքներին:

2010 թվականին համաձայնություն է տրվել նաև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2010-2012 թվականների ներդրումային ծրագրին, ինչպես նաև ամփոփվել ընկերության 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները:

Հանձնաժողովը շարունակում է փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացմանը միտված իր հետևողական քաղաքականությունը: 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործում է 100 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 66-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 129 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 408 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 138 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն մոտ 520 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետությունում կգործի 166 փոքր հիդրոէլեկտրակայան՝ 267 ՄՎտ գումարային հզորությամբ, և միջին տարեկան հաշվով կարտադրվի շուրջ 928 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր ամիս ամփոփվում և տեղադրվում է հանձնաժողովի ինտերնետային կայքում (www.psrc.am):

Հանձնաժողովն իր գործունեության առաջնահերթություններից է համարում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործումը: «Հայջրմուղկոյուղի», «Երևան Ջուր», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները յուրաքանչյուր տարի հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ, և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար

վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարումը: 2010 թվականին կատարված աշխատանքների արդյունքում բոլոր ընկերությունները իրենց սպասարկման տարածքի սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում սկսել են հրապարակել նաև տվյալ սպառողի հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

2010 թվականի ընթացքում սպառողներից ստացվել են 697 հարցադրում և բողոք, որոնցից 152-ը՝ գրավոր, 545-ը՝ հրատապ հեռախոսով և ընդունելությունների ընթացքում: Դրանցից 375-ը դրական լուծում են ստացել, 14-ի առնչությամբ մատակարար կազմակերպություններում անց են կացվում ուսումնասիրություններ, 32 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 276-ի վերաբերյալ տրվել են սպառիչ պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն: Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրաէներգիայի, գազի և խմելու ջրի մատակարարների հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ, իրականացվել են ստուգայցեր և ձեռնարկվել համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաև տպագիր մամուլի միջոցով հետևողաբար ծանուցումներ եւ հաղորդագրություններ են ներկայացվել հանձնաժողովի նիստերի եւ հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով հանձնաժողովի համապատասխան մասնագետները տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով եւ պարզաբանումներով:

Որպես գերակա ուղղություն՝ հանձնաժողովի ուշադրության առանցքում է գտնվել հեռահաղորդակցության ոլորտն իր խնդիրներով և զարգացման հեռանկարներով, որոնց մասին պարբերաբար հանդես են եկել հանձնաժողովի նախագահը, անդամներ և աշխատակազմի մասնագետները:

Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունը հրապարակվել է մամուլում, հասանելի դարձել էլեկտրոնային

փոստով, համացանցով: Հանձնաժողովի կայքում տեղադրվել և շարունակաբար թարմացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, որից օգտվելով՝ հանրային ծառայությունների խնդիրներով եւ զարգացման հեռանկարներով հետաքրքրվող լրագրողները հանրության քննարկմանն են ներկայացրել վերլուծական բնույթի հոդվածներ՝ լրացուցիչ անգամ հանրությանը իրազեկ դարձնելով հանձնաժողովի թափանցիկ և հրապարակային գործունեությանը:

6. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Հանձնաժողովը, համագործակցելով Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հետ, 2010 թվականին մասնակցել է վերջինիս կազմակերպած «Էներգետիկայի կարգավորող անձանց ներուժի ավելացում Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» տեխնիկական փոխանակման ծրագրի, լիցենզավորման և գնագոյացման, սակագնային կոմիտեների նիստերի, «Վերականգնվող էներգետիկայի կարգավորում» թեմայով համաժողովի աշխատանքներին, ինչպես նաև ERRA-ի կողմից անցկացվող 8-րդ միջազգային ամառային դասընթացներին:

Հանձնաժողովի ներկայացուցիչները 2010 թվականին մասնակցել են շարժական կապի համաշխարհային կոնգրեսի (MWS) և կարգավորող պետական մարմինների ներկայացուցիչների ֆորումի, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված Արևելյան տարածաշրջանի հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների համաժողովի աշխատանքներին:

Հանձնաժողովը ներկայացուցչական մասնակցություն է ունեցել նաև Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ընկերակցության լիցենզավորման կոմիտեի հերթական համաժողովին՝ «Էլեկտրաէներգետիկական շուկաների կարգավորում» և «Կենտրոնացված ջերմամատակարարման կարգավորման նախադրյալներ» թեմաներով, ինչպես նաև HAPYK-ի կողմից կազմակերպված Սևծովյան տարածքային ներածական սեմինարներին:

2010 թվականին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հրավերով՝ համագործակցության շրջանակում, հանձնաժողովի մասնագետներն այցելել են ԱՄՆ-ի Այովա նահանգ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի գործունեության ֆինանսավորման հաստատված բյուջեի, տարեկան ճշտված բյուջեի, ֆինանսավորման, դրամարկղային ծախսի, փաստացի ծախսի մասին

/հազ.դրամ/

Հոդ/համ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Հաստատված բյուջե	Ճշտված բյուջե	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	Ընդամենը	417970.8	417970.8	406015.47	406015.42	406097.63
411100	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	321516.0	321516.0	321516.0	321516.0	321516.00
413100	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	33619.2	33619.2	31612.76	31612.76	31838.64
421200	Էներգետիկ ծառայություն /գազ, էլ.էներգիա/	6200.0	6200.0	5611.04	5611.04	5595.72
421300	Կոմունալ ծառայություն /ջուր, աղբահանություն/	380.0	380.0	172.78	172.78	170.04
421400	Կապի ծառայություն / հեռ.կապ, իրտեկ, ռադիո, փոստ/	7208.0	9168.0	7889.23	7889.23	7758.66
	Գործուղումներ և շրջագայության ծախսեր	15200.0	12742.4	7240.53	7240.53	7240.53
422100	- հանրապետության ներսում		1480.0	1292.50	1292.50	1292.50
422200	- արտասահմանյան		11262.4	5948.03	5948.03	5948.03
423200	Համակարգչային ծառայություններ		350.0	120.90	120.90	120.90
423400	Տեղեկատվական ծառայություն / թերթեր, ամսագիր, հայտարարությունների տպագրություն	1050.0	1050.0	745.95	745.95	750.90
423700	Ներկայացուցչական ծախսեր	700.0	700.0	577.30	577.30	577.30
423900	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	681.4	681.4	619.13	619.13	619.13
425200	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգում ավտոմեքենաների, հովացման համակարգի, համակարգչային տեխնիկա	4352.3	4352.3	3264.05	3264.05	3264.05
426100	Գրասենյակային նյութեր	6200.0	6200.0	6190.81	6190.81	6190.81
426400	Տրանսպորտային նյութեր/բենզին, անվաղողեր, հակասառիչ հեղուկ, յուղ, տեխ.ստուգում	7775.7	7425.7	7012.15	7012.15	7012.15
426700	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	780.0	780.0	780.00	780.00	780.00
426900	Դրամաշնորհներ	1500.0	1997.6	1997.55	1997.55	1997.55
482300	Այլ ծախսեր	100.0	100.0	35.75	35.75	35.75
512100	Տրանսպորտային սարքավորումներ	9000.0	9000.0	8950.00	8950.00	8950.00
512200	Վարչական սարքավորումներ	1984.2	1984.2	1679.50	1679.50	1679.50